ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2042-Ա/2 **«30» հոկտեմբեր 2024 թ.**

«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2025» ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Կազմակերպել «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025» մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«30» հոկտեմբեր 2024 թ.
N 2042-Ա/2 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2025» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն կազմակերպում է «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025» **մրցույթ**:

Մրցույթն ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունում արտերկրի գիտնականների ղեկավարությամբ հեռանկարային, ժամանակակից գիտական ուղղություններով նոր ստորաբաժանումներ ստեղծելուն:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (https://grants.hesc.am)՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ: Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.hesc.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնից (հեռախոս՝ +37410 210 140 (*108), էլեկտրոնային փոստ՝ scexpert@hesc.am):

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«30» հոկտեմբեր 2024 թ.
N 2042-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2025» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025» մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2024 թվականի հոկտեմբերի 30-ի N 2042-Ա/2 հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով»:

1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունում (այսուհետ՝ **Կազմակերպություն**) արտերկրի գիտնականների ղեկավարությամբ հեռանկարային, ժամանակակից գիտական ուղղություններով նոր ստորաբաժանումներ ստեղծելուն:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով ***(Հավելված 2.1)***:

1.5. **Մրցույթին** մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ (այսուհետ՝ **Հայտ**), որը ներառում է գիտական նախագիծ (այսուհետ՝ **Նախագիծ**) և պահանջվող այլ փաստաթղթեր/տվյալներ:

1.6. **Նախագիծը** ***(Հավելված 2.2)*** պետք է լինի հավակնոտ, խոստումնալից և իրագործելի:

1.7. **Մրցույթում** միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված հրապարակումը (այսուհետ՝ **ՄԳՇ հրապարակում**) սահմանվում է Վեբ օֆ Սայնս

(Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկված հոդված (article), ակնարկ (review), նամակ (letter), գիտաժողովի նյութ (Conference paper, Proceedings Paper), գրքի գլուխ (book chapter), իսկ մենագրությունը (այսուհետ՝ **Մենագրություն**) սահմանվում է Վեբ օֆ Սայնս (Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկված և առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալ ունեցող գիրք տեսակի փաստաթուղթ (Book):

1.8. ***Հավելված 2.1***-ի «6» բնագավառի մասնագիտությունների համար 1 **Մենագրությունը** համարժեք է 4 **ՄԳԾ հրապարակման**:

1.9. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու ընթացակարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման փուլերը և շահառու **Հայտերի** ֆինանսավորման ու հաշվետվողականության ընթացակարգը:

2. Նպատակը

Մրցույթի նպատակներն են.

- խթանել ներպետական և միջազգային համագործակցությունը,
- զարգացնել **Կազմակերպության** գիտական և գիտատեխնիկական ներուժը,
- ներգրավել սփյուռքի և արտերկրի գիտական ներուժը,
- ներգրավել երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների,
- նպաստել միջազգային հետազոտական միջավայրին երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը,
- բարելավել գիտական միջավայրը,
- ստեղծել նոր, մրցունակ և հեռանկարային գիտական ստորաբաժանումներ,
- խթանել գիտության ոլորտում մրցակցային պայմանները:

3. Ժամկետները

3.1. **Նախագծերի** իրականացման տևողությունը 60 ամիս է:

3.2. **Մրցույթին** առցանց դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի դեկտեմբերի 20-ն է: **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (grants.hesc.am, այսուհետ՝ **Համակարգ**) **Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

3.3. Թղթային տարբերակով **Կազմակերպության** ներկայացուցչի կողմից **Կոմիտե** ներկայացվող փաստաթղթերի վերջնաժամկետը 2024 թվականի դեկտեմբերի 27-ն է:

3.4. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ֆինանսավորման մեկնարկը նախատեսվում է 2025 թվականի հունիս ամսից:

3.5. **Նախագծերի** ֆինանսավորման համար պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

3.6. Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետն է ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը:

3.7. **Նախագիծն** իրականացվում է պայմանագրում նշված ժամկետներում:

4. Գիտահետազոտական խումբը

4.1. **Նախագիծը** մշակում և իրականացնում է գիտահետազոտական խումբը (այսուհետ՝ **Խումբ**), որը կազմված է առավելագույնը երկու օտարերկրյա ղեկավար(ներ)ից (այսուհետ՝ **Խմբի ղեկավար**) և 2-5 անդամից՝ համաղեկավարից ու կատարողներից (այսուհետ՝ միասին՝ **Խմբի անդամներ**):

4.2. **Խմբում** պետք է ընդգրկվի՝

- առնվազն 3 անդամ (ներառյալ **Խմբի** համաղեկավարը)՝ ***Հավելված 2.1***-ի «1-4» բնագավառների համար,
- առնվազն 2 անդամ (ներառյալ **Խմբի** համաղեկավարը)՝ ***Հավելված 2.1***-ի «5-6» բնագավառների համար:

4.3. **Խմբի անդամները Հայտ** ներկայացնելու փուլում կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ:

4.4. **Խմբի անդամները Նախագծի** իրականացման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև **Նախագծի** իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

4.5. **Խմբի** անունից հանդես է գալիս **Խմբի** համաղեկավարը:

5. Խմբի ղեկավարը

5.1. **Խմբի ղեկավար** կարող է լինել այն անձը, ով՝

- ունի գիտական աստիճան,

- հիմնական/պայմանագրային հիմունքով աշխատում և զբաղվում է գիտահետազոտական գործունեությամբ (պրոֆեսոր, դասախոս, հետազոտող, կամ դրան համարժեք պաշտոն զբաղեցնող) արտերկրի որևէ գիտահետազոտական հաստատությունում կազմակերպությունում (բուհ, գիտական կենտրոն):

5.2. **Խմբի ղեկավարը** պետք է ներկայացնի 2020 - 2024 թթ.՝

Հավելված 2.1 -ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- առնվազն 8 **ՄԳՇ հրապարակում**

կամ

- ունենա առնվազն 15 Հիրշի ինդեքս (h-index)՝ ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների:

Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

- առնվազն 4 **ՄԳՇ հրապարակում**

կամ

- 1 **Մենագրություն**

կամ

- ունենա առնվազն 3 Հիրշի ինդեքս (h-index)՝ ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների:

5.3. Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հրապարակում ներկայացնելու դեպքում **Հայտը** գիտական փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի **Հայտերի** գնահատման փուլում:

5.4. **Նախագծի** իրականացման ամբողջ ժամանակահատվածում (60-ամսյա կտրվածքով) **Խմբի ղեկավարը** պետք է առնվազն 140 օր (20 շաբաթ) անցկացնի Հայաստանի Հանրապետության ընդունող **Կազմակերպությունում**, ինչպես նաև հանրագումարային առնվազն 60 օր իր ներկայացրած գիտական կազմակերպությունում ընդունի **Խմբի անդամներին**:

5.5. **Խմբի ղեկավարը** պատասխանատու է **Խմբի** կազմավորման և **Նախագծի** իրականացման հաջող ընթացքի համար:

6. Խմբի անդամները

6.1. Հայտը ներկայացնում է **Խմբի** համաղեկավարը:

6.2. Խմբի անդամները Հայտ ներկայացնելու փուլում կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ:

6.3. Խմբի անդամները Նախագծի իրականացման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև **Նախագծի** իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

6.4. Խմբի համաղեկավարը պետք է ծնված լինի 1984 թվականի հունվարի 1-ից հետո:

6.5. Խմբի անդամներից առնվազն երկուսը պետք է ծնված լինեն 1989 թվականի հունվարի 1-ից հետո և կարող են լինել բակալավրիատի առնվազն երրորդ կուրսի ուսանողներ: Նշված տարիքային շեմը կարող է բարձրանալ.

- զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնված լինելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար 1 տարով:

6.6. Խմբի կատարողները կարող են լինել **Նախագծի *Հավելված 2.1***-ի գիտական և գիտատեխնիկական բնագավառներին առնչվող մասնագիտությամբ բակալավրիատի առաջին կամ երկրորդ կուրսի ուսանողներ, եթե դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում 11-րդ կամ 12-րդ դասարաններում արժանացել են առնվազն երրորդ կարգի դիպլոմի:

6.7. Խմբի՝ 1989 թվականի հունվարի 1-ից հետո ծնված կատարողներից առնվազն մեկը 2024 թվականի դեկտեմբերի 20-ի (**Հայտերի** ընդունման վերջնաժամկետի) դրությամբ առնվազն մեկ տարի պետք է ներառված չլինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման որևէ ծրագրում:

6.8. Խմբի ղեկավարը և Խմբի անդամները չեն կարող ընդգրկվել **Մրցույթին** ներկայացված մեկից ավելի **Հայտերում:**

6.9. Մրցույթի շահառուները (**Խմբի ղեկավարը և Խմբի անդամները**) միաժամանակ չեն կարող հանդիսանալ հետևյալ մրցույթների շահառուներ.

- «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ» (2021 թ.),

- «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն - 2023 թ.»,
- «Գիտական ստորաբաժանումների ամրապնդման ծրագիր - 2024»,
- «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» (2022 թ., 2023 թ., 2024 թ., 2025 թ.),
- «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» (2022 թ., 2023 թ., 2024 թ.):

7. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

7.1. **Կազմակերպությունը** պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագիր իրականացնող:

7.2. **Կազմակերպությունը**, **Նախագծի** իրականացման ընթացքում, ապահովում է **Խմբի անդամների** հասանելիությունը առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

7.3. **Կազմակերպությունը** աջակցում է **Նախագծի** իրականացմանը:

7.4. **Կազմակերպությունը Խմբի ղեկավարին** տրամադրում է **Կազմակերպության** գիտական ուղղություններին **Նախագծի** համապատասխանությունը, կարևորությունը և արդիականությունը հիմնավորող՝ **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացություն:

7.5. **Կազմակերպությունը Նախագծի** իրականացման ամբողջ ընթացքում **Խմբի** համաղեկավարին ներառում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում:

7.6. **Նախագծի** իրականացման մինչև 24 ամիսը լրանալը, **Խմբի** համաղեկավարի (ստորաբաժանման ղեկավար) և կատարողների (ստորաբաժանման աշխատակիցներ) ընդգրկմամբ **Կազմակերպությունում** գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ձևավորվում է նոր գիտական ստորաբաժանում (խումբ, լաբորատորիա, բաժին), որտեղ **Խմբի** համաղեկավարի ղեկավարած ստորաբաժանման՝ **Հայտում** ընդգրկված աշխատակիցների գումարային աշխատաժամանակի տևողությունը բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրում պետք է լինի շաբաթական առնվազն

120 ժամ (այն համապատասխանում է 3 լրիվ զբաղվածության համարժեքին (Full Time Equivalent. FTE)):

7.7. **Կազմակերպության** ղեկավարը **Խմբի ղեկավարին** է տրամադրում տեղեկանք, որ ծանոթ է **Մրցույթի** հրավերի պայմաններին և պատրաստ է **Նախագծի** հաջող ընթացքի պարագայում **Կազմակերպության** բազային ֆինանսավորման ֆինանսական միջոցներով ապահովել սույն հրավերի «7.**5.**» և «7.**6.**» ենթակետերով նախատեսված պայմանները:

7.8. Ծախսերի նախահաշվի (այսուհետ՝ **Նախահաշիվ**), «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված ֆինանսական միջոցներով **Կազմակերպությունը** ստեղծում է **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

7.9. **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

7.10. Ձեռք բերված սարքերն ու սարքավորումները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում, տնօրինման իրավունքը պատկանում է **Կազմակերպությանը՝** հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

7.11. **Նախագիծը** ֆինանսավորման երաշխավորվելուց հետո **Կազմակերպության, Կոմիտեի** և **Խմբի** համաղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

8. Ակնկալվող արդյունքները

8.1. **Նախագծի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած ֆինանսավորման մասին.

- *The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № _____).*

8.2. **Նախագծի** կատարման 35 ամիսը լրանալուց հետո **Խմբի անդամները** պետք է ներկայացնեն որպես աշխատավայր (affiliation) **Կազմակերպության** և սույն հրավերի **«8.1.»** ենթակետով սահմանված նշումներով.

Հավելված 2.1-ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- առնվազն 4 **ՄԳՇ հրապարակում**,

Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

- առնվազն 2 **ՄԳՇ հրապարակում**

կամ

- 1 **Մենագրություն**:

Ուշադրություն. Համապատասխան նշումների բացակայության դեպքում հրապարակումը չի համարվի Նախագծի իրականացման արդյունք, հետևաբար՝ հաշվի չի առնվի հաշվետվության մեջ:

8.3. **Նախագծի** կատարման 35 ամիսը լրանալուց հետո սույն հրավերի «8.**2.**» ենթակետի պայմանները չկատարելու դեպքում **Նախագծի** ֆինանսավորումը դադարեցվում է:

8.4. **Նախագծի** ավարտից հետո (60-ամսյա կտրվածքով) **Խմբի** անդամները պետք է ներկայացնեն որպես աշխատավայր (affiliation) **Կազմակերպության** և սույն հրավերի «8.**1.**» ենթակետով սահմանված նշումներով.

Հավելված 2.1-ի «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- առնվազն 8 **ՄԳՇ հրապարակում**, որոնցից առնվազն 2-ը՝ Q1 և առնվազն 2-ը՝ Q2 քառորդներում ընդգրկված պարբերականներում,

Հավելված 2.1-ի «6» բնագավառի մասնագիտություններով.

- առնվազն 4 **ՄԳՇ հրապարակում**, որոնցից առնվազն 2-ը՝ Q1 և առնվազն 2-ը՝ Q2 քառորդներում ընդգրկված պարբերականներում

կամ

- 2 **Մենագրություն**:

***Հավելված 2.1*-ի «6» բնագավառի մասնագիտությունների համար 1 Մենագրությունը համարժեք է ՄԳՇ-ում ընդգրկված 4 հրապարակման:**

8.5. Որպես **Նախագծի** արդյունք ներկայացված առնվազն 4 գիտական հրապարակումներում **Խմբի** համաղեկավարը պետք է լինի կամ առաջին, կամ

վերջին, կամ նամակագրություն վարող (corresponding author) հեղինակ, կամ ունենա որևէ համարժեք նշում:

8.6. **Նախագծի** իրականացման արդյունքում **Խումբը** պետք է ներկայացնի ***Հավելված 2.1***-ի «1-5» բնագավառների մասնագիտություններով 25,000.0 հազար (քսանհինգ միլիոն) դրամը գերազանցող, իսկ ***Հավելված 2.1***-ի «6» բնագավառի մասնագիտություններով՝ 15,000.0 հազար (տասնհինգ միլիոն) դրամը գերազանցող միջազգային գիտական դրամաշնորհի ներկայացված առնվազն 1 հայտի (submitted grant) վերաբերյալ հավաստող փաստաթուղթ:

8.7. **Նախագծի** իրականացման ընթացքում **Խումբը** պետք է ապահովի **Նախագծի** կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

8.8. Սույն հրավերի «**8.1.**», «**8.2.**», «**8.4.**», «**8.5.**» և «**8.6.**» ենթակետերով նշված պայմանները չկատարելը/կատարելը կանդրադառնա **Կոմիտեի** կողմից հետագայում հայտարարվող մրցույթներում **Խմբի անդամների** ընդգրկմամբ հայտի գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի ղեկավարի** կամ **Խմբի** համաղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի** կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին ներկայացվելիք հայտի գնահատականի նվազեցումը կչեղարկվի սույն հրավերի «**8.1.**», «**8.2.**», «**8.4.**», «**8.5.**» և «**8.6.**» ենթակետերով նշված պայմանները բավարարելու մասին **Կոմիտե** ներկայացված տեղեկատվության հիման վրա:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. **Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը**

9.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Խմբի** համաղեկավարը՝ **Համակարգի** *(*grants.hesc.am*)* միջոցով: **Հայտի** ուղարկման վերջնաժամկետը 2024 թվականի

դեկտեմբերի 20-ն է (**Հայտերի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

9.2. **Համակարգի** միջոցով **Հայտն** ուղարկելուց հետո **Խմբի** համաղեկավարը թղթային տարբերակով **Կազմակերպություն** է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

- **Համակարգում** ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտի** տիտղոսաթերթը և **Նախահաշիվը**,
- **Խմբի ղեկավարի** դիմումը,
- գիտական խորհրդի համապատասխան եզրակացությունը (Board Conclusion),
- **Հայտում** ներառված **Խմբի անդամ(ներ)ի** սույն հրավերի «**6.9.**» ենթակետում նշված ծրագրերում ընդգրկված լինելու դեպքում՝ համապատասխան ծրագրի ղեկավարի գրավոր համաձայնությունը,
- **Կազմակերպության** ղեկավարի՝ սույն հրավերի «**7.7.**» ենթակետով պահանջվող տեղեկանքը,
- **Խմբի** անդամների ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանքները, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
- տարիքային շեմը բարձրացնելու համար՝ զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը:

9.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

9.4. **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 27-ը ներառյալ, մեկ ընդհանուր փաթեթով, **Կազմակերպության** ղեկավարի գրությամբ (***Հավելված 2.3***), աշխատանքային ժամերին **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** կողմից ներկայացված բոլոր **Հայտերի** փաթեթները՝ առձեռն (Օրբելի եղբայրների փողոց 22, 9-րդ հարկ, 907 սենյակ):

9.5. **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեից** (հեռախոս՝ (010) 210140 (ներքին 108), էլեկտրոնային փոստի հասցե՝ scexpert@hesc.am):

Ուշադրություն. Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը: Հայտերը, որոնք չեն

ուղարկվել վերը նշված ընթացակարգով և ժամկետներում, քննարկման ենթակա չեն:

10. **Նախահաշվի կազմությունը**Նախահաշիվը կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ», «Խմբի կամ լաբորատորիայի ստեղծում» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:Ֆինանսավորման առավելագույն չափը կարող է լինել՝5 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 130,000.0 հազար (մեկ հարյուր երեսուն միլիոն) դրամ,

- 4 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 107,000.0 հազար (մեկ հարյուր յոթ միլիոն) դրամ,
- 3 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 84,000.0 հազար (ութսունչորս միլիոն) դրամ,
- 2 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 61,000.0 հազար (վաթսունմեկ միլիոն) դրամ:

10.3. **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում **Խմբի անդամների** աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 300,0 (երեք հարյուր) հազար դրամ, իսկ նվազագույն չափն՝ 150.0 (մեկ հարյուր հիսուն) հազար դրամ՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները.- 5 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 90,000.0 հազար (իննսուն միլիոն) դրամ,

- 4 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 72,000.0 հազար (յոթանասուներկու միլիոն) դրամ,
- 3 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 54,000.0 հազար (հիսունչորս միլիոն) դրամ,
- 2 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 36,000.0 հազար (երեսունվեց միլիոն) դրամ: Աշխատանքի վարձատրության գումարը սույն հրավերի «**10.3.**» ենթակետում նշված չափից պակաս նախատեսելու դեպքում՝ տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում: **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներով 60 ամսվա համար կարելի է նախատեսել

- 5 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 25,000.0 հազար (քսանհինգ միլիոն) դրամ,
- 4 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 20,000.0 հազար (քսան միլիոն) դրամ,
- 3 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 15,000.0 հազար (տասնհինգ միլիոն) դրամ,
- 2 անդամից բաղկացած **Խմբի** համար՝ 10,000.0 հազար (տասը միլիոն) դրամ:

Վերոնշյալ գումարները կարող են ավելանալ սույն հրավերի «**10.4.**» ենթակետում նշված տարբերության չափով:

10.6. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող է նախատեսվել **Խմբի ղեկավարի** Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածի համար հոնորար՝ շաբաթական մինչև 150.0 (մեկ հարյուր հիսուն) հազար դրամ, բայց ոչ ավելի, քան 3,000.0 հազար (երեք միլիոն) դրամ **Նախագծի** իրականացման ամբողջ ժամանակահատվածում (60-ամսյա կտրվածքով):**Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի և ծառայությունների ձեռքբերման ծախսեր: Ծառայությունների մատուցման պայմանագիր կարող է կնքվել միայն իրավաբանական անձի հետ՝ նախապես համաձայնեցնելով **Կոմիտեի** հետ:Գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերումը չի կարող նախատեսվել **Նախագծի** իրականացման վերջին տարում:**Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** իրականացման**,** ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար, ինչպես նաև **Խմբի ղեկավարի** և **Խմբի անդամների** փոխադարձ այցելությունների ծախսերը հոգալու համար:Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ:**Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Խմբի կամ լաբորատորիայի ստեղծում» ենթահոդվածով առաջին 12 ամսվա համար կարող է հայցվել 15,000.0 հազար (տասնհինգ միլիոն) դրամ, որը կարող է օգտագործվել խմբի կամ լաբորատորիայի (բաժնի) ենթակառուցվածքի բարելավման ուղղությամբ և

Նախագծի իրականացման համար անհրաժեշտ այլ ծախսերի համար:**Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով (60 ամսվա համար) կարող է նախատեսվել մինչև 2,500.0 հազար (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:**Նախահաշվի** բոլոր ենթահոդվածների ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:**Հայտի** քննարկման ընթացքում **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Խմբի ղեկավարի և** համաղեկավարի համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

11. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին

11.1. **Կոմիտեն** ստուգում է

- **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- Բեալի ցանկերում *(Beall's list, https://beallslist.net/)* ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հրապարակումների առկայությունը **Հայտում**:

11.2. **Հայտը** չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ նախագծի հետ:

11.3. Ստուգման արդյունքները տրամադրվում են **Հայտերի** գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ **Խորհուրդ**):

11.4. **Խորհուրդը** քննարկում և հաստատում է գիտական փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

11.5. **Մրցույթի** պայմաններին չհամապատասխանող **Հայտը** գիտական փորձաքննության փուլ չի անցնում, որի մասին **Համակարգի** (grants.hesc.am) միջոցով տեղեկացվում է **Խմբի** համաղեկավարը:

12. Գիտական փորձաքննությունը

12.1. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում ու հաստատում է **Հայտերի** գիտական փորձաքննության առաջին, երկրորդ և երրորդ փուլերի գնահատման թերթիկները և վարման ընթացակարգը:

12.2. Գիտական փորձաքննության առաջին փուլում Խորհուրդը գնահատում է **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը (***Հավելված 2.4***):

12.3. Գիտական փորձաքննության երկրորդ փուլում **Խորհուրդը** անցկացնում է հարցազրույց **Խմբի ղեկավարի** և համաղեկավարի հետ:

12.4. Գիտական փորձաքննության երրորդ փուլում փորձագետը գնահատում է **Հայտը՝ Նախագիծը:**

12.5. **Կոմիտեի, Խորհրդի** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

13. Գիտական փորձաքննության առաջին փուլը (ընդարձակ ամփոփագրի գնահատում)

13.1. Գիտական փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը**, հաշվի առնելով **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը, **Խմբի ղեկավարի** և համաղեկավարի գիտական հետագիծը (track record), մասնագիտական ինքնակենսագրությունը (CV), **Կազմակերպության** համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, կոնսենսուսի սկզբունքով ձևավորում է առաջին փուլը հաղթահարած **Հայտերի** ցանկը, որոնք անցնում են փորձաքննության հաջորդ փուլ:

13.2. Գիտական փորձաքննության առաջին փուլը չհաղթահարած **Հայտը** երկրորդ փուլ չի անցնում, որի մասին **Համակարգի** (grants.hesc.am) միջոցով տեղեկացվում է **Խմբի** համաղեկավարը:

14. Գիտական փորձաքննության երկրորդ փուլը (հարցազրույց**)**

14.1. **Խորհուրդը** անցկացնում է հարցազրույց **Խմբի ղեկավարի** և համաղեկավարի հետ: Այս փուլում գնահատվում են **Խմբի ղեկավարի** և **Խմբի անդամների** մասնագիտական համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, **Կազմակերպությունում** իրականացման նախադրյալները, համապատասխանությունը ոլորտի զարգացման միտումներին, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների

տնօրինումը և տարածումը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

14.2. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Խորհրդի** անդամը լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկը:

14.3. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

14.4. Հարցազրույցի վերջնական գնահատականը **Խորհրդի** անդամների գնահատականների միջին թվաբանականն է:

14.5. Գիտական փորձաքննության երրորդ փուլ անցնում են այն **Հայտերը**, որոնց Հարցազրույցի գնահատականը կազմում է Հարցազրույցի առավելագույն գնահատականի առնվազն 70 տոկոսը:

14.6. Գիտական փորձաքննության երկրորդ փուլը չհաղթահարած **Հայտը** երրորդ փուլ չի անցնում, որի մասին **Համակարգի** (grants.hesc.am) միջոցով տեղեկացվում է **Խմբի** համաղեկավարը և էլեկտրոնային եղանակով՝ **Խմբի ղեկավարը**:

14.7. **Կոմիտեն Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Խմբի** համաղեկավարին և էլեկտրոնային եղանակով՝ **Խմբի ղեկավարին** տրամադրում է **Հայտի** գիտական փորձաքննության երկրորդ փուլի (հարցազրույց) արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

15. Գիտական փորձաքննության երրորդ փուլը (փորձագետի գնահատում)

15.1. Փորձաքննության երկրորդ փուլը հաղթահարած **Հայտերը** ենթարկվում են գիտական փորձաքննության: Այս փուլում գնահատվում են **Նախագծի** արդի վիճակը, նորույթը, հեռանկարային բնույթը, **Կազմակերպությունում Նախագծի** իրականացման նախադրյալները, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության աստիճանը, **Խմբի ղեկավարի և Խմբի անդամների** մասնագիտական համապատասխանությունը **Նախագծին** և որակավորումը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

15.2. **Հայտը** գնահատվում է առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:

15.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

15.4. Փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է Հայտի առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

15.5. Երկու փորձագետների գնահատականները փորձագետի առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** ենթարկվում է փորձաքննության երրորդ փորձագետի կողմից:

16. Գնահատման արդյունքները

16.1. **Հայտի** գնահատականը գիտական փորձաքննության երկրորդ փուլի արդյունքում ձևավորված հարցազրույցի գնահատականի և գիտական փորձաքննության երրորդ փուլի արդյունքում ձևավորված երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի գումարն է: Եթե **Հայտը** գնահատվել է երեք փորձագետի կողմից, ապա **Հայտի** գնահատականը փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականի (երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում՝ երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականի) և հարցազրույցի գնահատականի գումարն է:

16.2. **Կոմիտեն** գիտական փորձաքննության երրորդ փուլ անցած **Հայտերի** գնահատականների հիման վրա ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով և ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

16.3. **Խորհուրդը** հաստատում է **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը և առաջարկում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը:

16.4. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը և **Նախարարի** հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը և յուրաքանչյուր **Նախագծի** իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

16.5. **Նախարարի** հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը և յուրաքանչյուր **Նախագծի** իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

16.6. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

16.7. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տեղեկություններ՝ տվյալ **Կազմակերպությունից Մրցույթի** շահառու **Նախագծերի** վերաբերյալ:

16.8. **Կոմիտեն Համակարգի** (grants.hesc.am) միջոցով **Խմբի** համաղեկավարին տրամադրում է **Հայտի** գիտական փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17. Պայմանագրերի կնքումը

17.1. **Կոմիտեի**, **Կազմակերպության** և **Խմբի** համաղեկավարի միջև կնքվում է **Համակարգում** ինքնաշխատ եղանակով կազմված **Պայմանագիր**:

17.2. **Խմբի անդամների** ամսական վարձատրությունն ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր.

- **Կազմակերպության** և **Խմբի** համաղեկավարի միջև,
- **Կազմակերպության**, **Խմբի** համաղեկավարի և կատարողի միջև:

Վերոնշյալ պայմանագրերի պատճենները **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) ներկայացնում է **Կոմիտե: Խմբի անդամների** ամսական վարձատրությունն ապահովելու համար **Կազմակերպությունը** կնքում է պայմանագրեր՝ Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, որոնց պատճենները **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) ներկայացնում է **Կոմիտե:**

17.3. **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հրապարակելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

17.4. **Նախագծերը** իրականացվում են **Պայմանագրում** նշված ժամկետներում:

18. Հաշվետվությունը

18.1. **Նախագծի** իրականացման մասին կազմվում են ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ:

18.2. **Նախագծի** իրականացման ընթացքում, **Նախագծի** ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը, **Կոմիտե** է ներկայացվում ընթացիկ հաշվետվություն **Խմբի** համաղեկավարի կողմից՝ **Համակարգի** (grants.hesc.am) միջոցով, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

18.3. **Նախագծի** իրականացման 35-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը, **Կոմիտե** է ներկայացվում եռամյա հաշվետվություն՝ ներառելով **Նախագծի** ակնկալվող միջանկյալ արդյունքները (սույն հրավերի **«8.2.»** ենթակետ) **Խմբի** համաղեկավարի կողմից՝ **Համակարգի** (grants.hesc.am) միջոցով, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** հետագա ֆինանսավորումը դադարեցնելու կամ ևս 24 ամիս շարունակելու նպատակահարմարության մասին:

18.4. **Նախագծի** իրականացման 60-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը **Խմբի** համաղեկավարը **Կոմիտե** է ներկայացնում ամփոփիչ հաշվետվություն՝ ներառելով **Նախագծի** ակնկալվող արդյունքները (սույն հրավերի «**8.4.**», «**8.5.**» և «**8.6.**» ենթակետեր), որոնց հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին:

18.5. Գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության գնահատման նպատակով, սահմանված կարգով, **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** ընթացիկ մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:

18.6. **Նախագծի** հետագա ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ **Խորհուրդը** պետք է հաշվի առնի նաև **Կոմիտեի** իրականացրած մշտադիտարկման արդյունքները:

18.7. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

19. Լրացուցիչ տեղեկություններ

19.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Նախագիծ** և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում **Խմբի ղեկավարը** և համաղեկավարը պետք է առաջնորդվեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

19.2. **Խմբի** համաղեկավարը՝ **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ, կարող է կատարել **Պայմանագրի** նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի ենթահոդվածներով նախատեսված ծախսերի վերաբաշխում՝ **Կոմիտե** ներկայացնելով համապատասխան ձևաթղթով հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը: Վերաբաշխում կատարելու դեպքում **Կոմիտե** է ներկայացվում **Պայմանագրի** նախահաշվի փոփոխված տարբերակը:

19.3. **Խմբի ղեկավարի** կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ **Կազմակերպության** ղեկավարի միջնորդությամբ, **Կազմակերպության** գիտական խորհրդի և **Խմբի անդամների** համաձայնությամբ, **Կոմիտեի** գրավոր թույլտվությամբ կարելի է կատարել **Խմբի ղեկավարի** փոփոխություն:

19.4. **Նախագծի** իրականացման ընթացքում **Խմբի ղեկավարը** կարող է տեղափոխվել Հայաստանի Հանրապետություն մինչև **Նախագծի** ֆինանսավորման ավարտը: Այդ նպատակով **Խմբի** համաղեկավարը դիմում է **Կոմիտե՝ Խմբի անդամների** թիվը ևս մեկով ավելացնելու առաջարկով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում և առաջարկելով **Խմբի ղեկավարին** համարժեք փոփոխություն:

19.5. Սույն հրավերի «**19.4.**» ենթակետում նշված պայմանի կատարման դեպքում՝ նոր կատարողի աշխատանքի վարձատրության (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) չափը սահմանվում է ամսական մինչև 600.0 (վեց հարյուր) հազար դրամ, իսկ ընտանիքի անդամ(ներ)ի հետ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու դեպքում՝ մինչև 750.0 (յոթ հարյուր հիսուն) հազար դրամ և կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով ամրագրվում է **Պայմանագրի** գնի փոփոխությունը:

19.6. Սույն հրավերի «**19.4.**» ենթակետում նշված պայմանի կատարման դեպքում՝ **Կազմակերպությունը Խմբի ղեկավարին** ներառում է գիտական և

գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագրում: Եթե **Խմբի ղեկավարը** ծնվել է 1974 թվականի հունվարի 1-ից հետո, ապա նա կարող է զբաղեցնել սույն հրավերի «**7.6.**» ենթակետով ձևավորված գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը:

19.7. **Խմբի** համաղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ **Կազմակերպության** ղեկավարի միջնորդությամբ, **Կազմակերպության** գիտական խորհրդի, **Խմբի ղեկավարի** և կատարողների համաձայնությամբ, **Կոմիտեի** գրավոր թույլտվությամբ կարելի է կատարել **Խմբի** համաղեկավարի փոփոխություն: **Խմբի** համաղեկավարի փոփոխության դեպքում կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով **Խմբի** նոր համաղեկավարը պարտավորվում է **Նախագիծը** իրականացնել համաձայն **Պայմանագրի**:

19.8. **Խմբի** համաղեկավարը՝ **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ, կարող է կատարել **Խմբի** կատարողի համարժեք փոփոխություն՝ **Կոմիտե** ներկայացնելով համապատասխան ձևաթղթով հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը: **Խմբի** կատարողի փոփոխություն կատարելու դեպքում **Կոմիտե** է ներկայացվում նոր կատարողի հետ կնքված պայմանագրի պատճենը:

19.9. **Խմբի** համաղեկավարը՝ **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ, կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ (բավարարելով սույն հրավերի «**4.2.**» ենթակետով նշված պայմանը)՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Կատարողների թվի կրճատման դեպքում կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով ամրագրվում է **Պայմանագրի** գնի փոփոխությունը:

19.10. **Խմբի** կատարողի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, մինչև **Խմբում** նոր կատարող ընդգրկելը, **Խմբի** համաղեկավարը՝ **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ, կարող է դիմել **Կոմիտե**՝ տվյալ կատարողի աշխատանքի վարձատրությունը մինչև երեք ամիս տևողությամբ դադարեցնելու միջնորդությամբ (բավարարելով սույն հրավերի «**4.2.**» ենթակետով նշված պայմանը)՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Եռամսյա ժամկետում կատարող չընդգրկելու դեպքում կատարողների թիվը կրճատվում է մեկով, և կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով ամրագրվում է **Պայմանագրի** գնի (ներառյալ երեք ամսվա աշխատանքի

վարձատրության գումարը) փոփոխությունը: **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում ավելացած գումարը **Խմբի ղեկավարը** կարող է վերաբաշխել միայն նույն հոդվածի շրջանակներում:

19.11. **Նախագծի** իրականացման ընթացքում (ոչ շուտ, քան 12 ամիս անց) **Խմբի** համաղեկավարը՝ **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ, կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողների թիվը **Նախագծին** առնչվող մասնագիտություն ունեցող մինչև 35 տարեկան երկու կատարողներով ավելացնելու առաջարկով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

19.12. Սույն հրավերի «**19.12.**» ենթակետով ներգրավված կատարողները պետք է չլինեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող որևէ կազմակերպության աշխատակից:

19.13. Կատարողների թիվն ավելանալու պարագայում **Պայմանագրի** գինն ավելանում է յուրաքանչյուր նոր կատարողի համար մինչև 1,800.0 հազար (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամով (12-ամսյա կտրվածքով) և կնքվում է **Պայմանագրի** անբաժանելի մաս կազմող համաձայնագիր, որով ամրագրվում է **Պայմանագրի** գնի փոփոխությունը:

19.14. **Խմբի անդամների**՝ Հայաստանի Հանրապետությունից 12 ամսվա ընթացքում երկու ամսից ավելի անընդմեջ բացակայելով հանդերձ **Նախագծում** աշխատանքները շարունակելու համար դեպքերը պետք է նախապես գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ:

20. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

Կոմիտեն կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- սահմանված ժամկետում չի ներկայացվել ընթացիկ հաշվետվություն կամ հաշվետվության վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն,

- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում կատարվել է վերաբաշխում,

- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Խմբի** կազմում կատարվել է փոփոխություն,

- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Խմբի անդամներից** որևէ մեկը 12 ամսվա ընթացքում երկու ամսից ավելի անընդմեջ բացակայել է Հայաստանի Հանրապետությունից,

- չի կատարվել սույն հրավերի **«7.5.», «7.6.»,** «**8.2.**», և **«19.5.»** ենթակետերում նշված պայմանները, ընդ որում՝ այն կանդրադառնա **Կազմակերպությունից Կոմիտե** ներկայացված հայտերի վրա՝ հետագա ծրագրի համար ստեղծված համապատասխան խորհրդի եզրակացությամբ որոշված չափով:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել անգլերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.*

1. Համառոտ բնութագիրը (անոտացիա)

2. Հետազոտական խնդրի վերաբերյալ գիտելիքների ներկա վիճակի մասին վերլուծությունը

3. Ծրագրի նպատակները և խնդիրները

4. Հետազոտական նախագիծը

5. Առկա նյութատեխնիկական ռեսուրսները: Գիտական մեթոդները

6. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների կամ Գանտի աղյուսակ)

7. Խմբի ձեռքբերումները տվյալ ոլորտում, օտարերկրյա գործընկերոջ համապատասխանությունը Նախագծի նպատակներին

8. Խմբի զարգացման հեռանկարները (ռիսկերը և հնարավորությունները)

9. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

10. Օգտագործված գրականության ցանկը

---

* *Ցանկության դեպքում **Նախագիծը** կարող է ներկայացվել և՛ անգլերեն, և՛ հայերեն:*

N _____ «____» _____ 2024 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հայոցյան,

Խնդրում եմ ընդունել «*Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025*» մրցույթին __(Կազմակերպության անվանում)_ից ներկայացված _____ ծածկագր(եր)ով հայտ(եր)ը:

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

[*] *Հավելված N 2.3-ով առաջարկվող տեքստը ներկայացնել Կազմակերպության ձևաթղթով:*

Նախագծի վերնագիրը

Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է գիտական փորձաքննության առաջին փուլում: Անհրաժեշտ է ընդարձակ ամփոփագիրը ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 2 էջ:

Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի **Նախագծի** հակիրճ տարբերակը և շեշտադրի հետազոտության կարևորությունն ու նպատակահարմարությունը: